

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ


Լաւրէոսի խաղաղը և Լեւոնայի Կոնստանտինը :

ԼՅՐԻԱԿԱՆ ծովուն եզերքէն քիչ մը հեռու պզտիկ քաղաք մը կայ Լաւրէտոն անուամբ, որ գրեթէ 555 տարիէ 'ի վեր մեծ ուխտատեղի է ամենայն քրիստոնէից, վասն զի հոն փոխադրուած է Լազարէթ քաղքէն սբ Լստուածածնայ տունը : Թէպէտ և ժայռի վրայ շինած է աս քաղաքը, բայց անոյշ ու մաքուր ջուր ունի, բոլորտիքն ալ որ առաջ անպտուղ դափնիներով ծածկուած էր՝ հիմա բոլոր այգի, ձիթենի և ուրիշ պտղաբեր ծառեր տնկած են ու երկիրը շատ գեղեցիկ դիւր ունի : Բնակիչքը գրեթէ 8000 հոգի են :

Լաւրէտոնի Լստուածածնայ տունը ըսելով կ'իմացուի անիկայ, որուն մէջ ծնաւ սուրբ կոյսը ու մեծցաւ . ուստի արդէն հաւատացելոց ուխտատեղի եղած էր՝ Լազարէթէն Խաւիա փոխադրուելէն առաջ ալ :

Լս սբ Լստուածածնայ տանը առջի պատիւ տուողներն եղան առաքեալները, որ Լստուածածնայ վերափոխմանէն ետեւ մէկէն իրեն մասնաւոր յիշատակը կատարելու համար տաճար ձևացուցին ան տունը, ու աս յիշատակը պահեցին իրենց յաջորդներն ալ . և ինչպէս Գողգոթա լեռը և սուրբ գերեզմանը, ասանկ ալ աս սուրբ տունը մեծ ուխտատեղի եղաւ հաւատացելոց : Սեփին Լոստանդիանոսի մայրը սուրբ Հեղինէ թագուհին այցելութեան ելլալով ան սուրբ տեղերուն, Լստուածածնայ տունը փառաւոր տաճարի մը պէս զարդարեց : Ետքը երբոր Լրաբացւոց ձեռքէն սուրբ երկիրը առին խաչակիրք, Լոփրետոս իրեն քաջ զօրքերովը Վրիստոսի սուրբ գերեզմանին այցե-

լութի ընելէն ետեւ, գնաց նաեւ Լազարէթ Լստուածածնայ տունը տեսնելու . ասանկով նորէն շատցաւ ուխտաւորաց երթեկուծութիւնը : Ետքոր նորէն անհաւատից ձեռքը ընկաւ, 1291^{ին} մայիսի 9^{ին} զարմանալի հրաշքով Լազմատիա փոխադրուեցաւ : Լն կողմի բնակիչքը տեսնելով աս հրաշքը՝ ապշեցան մնացին, մանաւանդ երբոր տեսան անկէ եղած անթիւ հրաշքներն ալ : Հոն երկու տարի ու եօթը ամիսի չափ կենալէն վերջը, յանկարծ Խաւիա փոխադրուեցաւ . առաջ իջաւ Խեքանաթի գեղին քով անտառի մը մէջ : Լս հրաշքիս առջի տեսնողները հովիւներն եղան որ ան տեղուանքը իրենց ոչխարները կ'արածեն եղեր . ետքը քովի բնակիչները և ուրիշ շատ մարդիկ ալ հոն վազեցին, ու համբաւը շուտ մը բերնէ բերան անցնելով բոլոր Եւրոպա տարածուեցաւ . բայց աւազակները ուխտաւորաց բերած ընծաները տեսնելով, երբեմն երբեմն անտառէն կ'ելլէին ու խեղճ ուխտաւորները կը կողոպտէին : Լարծես թէ աս պատճառաւ սուրբ տունը մէկ բարձր բլրի մը վրայ փոխադրուեցաւ՝ առջի տեղէն մէկ մղոն հեռու : Լն բլուրը երկու հարազատ եղբարց ժառանգութիւն էր, որ առջի բերան սիրով ընդունեցան տունը . բայց երբոր ուղեցին ունեցածնին բաժնել, ան բլրին համար վէճ եղաւ թէ արդեօք որով կ'իյնայ . կ'ըսեն թէ այնչափ տաքքեր են որ ինչուան մէկզմէկ թրով վերաւորելով վէճը դադրեր է . և կարծես թէ աս կըռուին պատճառաւ ալ տունը նոյն տեղէն ելեր ու մէկ նետաչափ հեռու տեղ գնացեր է Խեքանաթիի ճամբուն վրայ, ու ինչուան հիմա հոն է : Խեքանաթիի մարդիկը իրենց մասնաւոր պաշտպան ընտրեցին սուրբ կոյսը, ու ան մատրան բոլոր քովի երկիրները իրեն ընծայեցին . հիւղեր՝ տնակներ՝ հիւրանոցներ շինեցին, դուրսն ալ սեղան մը կանգնեցին . ետքը առանձին մարդիկ իրենց համար ալ



տներ շինեցին . ասանկով լաւ ետոնը
գեղ մը ձևացաւ , ու ետքը քաղաք
դարձաւ : Աւերաւանի քաղաքը փառա-
ւոր տաճար մը շինեցին՝ սուրբ տունը
մէջը առնելու համար . (Սուրբ Բ
պապը նոր տաճար մըն ալ շինեց առ-
ջինէն աւելի փառաւոր , քոյն ալ քա-
հանայից բնակելու տեղ . ուրիշ հայ-
րապետներն ալ չորս կողմը պարիսպ
քաշեցին , ու քաղաքին պատիւը աւե-
լի մեծցուցին՝ եպիսկոպոսական ա-
թոռ ընելով . աս պատճառաւ աւելի
շատցան ուխտի գնացողները . կ'ըսեն
թէ ամէն տարի ինչուան 200,000^{էն}
աւելի ուխտաւոր կ'երթայ հոն : Ասկ
թագաւորներուն իշխաններուն տը-
ւած փառաւոր ընծաները խիստ շատ
ու հարուստ բաներ էին . և թէպէտ
Վաղղիացիք ան գանձերուն մեծ մա-
սը յափշտակեցին ատենով , բայց ետ-
քը նորէն հարըստցաւ :

Ըստունը 31 ոտք երկայնութիւն
ունի , 13 ոտք լայնութիւն , 18 բար-
ձրութիւն . ներսը մէկ թղաչափ բար-
ձրութեամբ արձան մը կայ Ըստուա-
ծածնայ՝ մայր փայտէ շինած . աս ար-
ձանը Վաղղիացւոց խռովութեան ա-
տենը փարիզ տարուեցաւ , բայց ետ-
քը 1801^{էն} Պիոս Է հայրապետին ա-
ղաչանքովը նորէն դարձուցին . անոր
տակը սեղան մը կայ ակատ՝ յասպիս
ու գոճաղմ քարերէ շինած . աս աղ-
նիւ ընծան Վոզմաս Բ , (Թոսքանայի
դուքսը նուիրեց . աս սեղանին մէջ
ագուցած է նաև սուրբ տանը հետ
եկած առջի սեղանը : Աղանին ձախ
կողմը պատին վրայ թնդանթի ռումբ
մը կախուած է , որ Սիրանտոլայի պա-
շարման ատենէն մնացած է . իսկ աջ
կողմը դարան մը կայ , մէջը խոհակե-
րոցի կարասիք և ուրիշ անթներ .
պատուհանին տակը խաչելութեան
պատկեր մը կայ , երկու կողմն ալ
սուրբ կուսին և (Յովհաննէս աւե-
տարանչին պատկերքը : Շատ փառա-
ւոր զարդերով շինուած է դրսի կողմը ,
որուն երկայնութիւն է 60 թիզ , լայ-
նութիւնը 40 ու բարձրութիւնը 50^{էն}

աւելի . տանը չորս կողմը 16 սիւն կայ՝
վարպետ բանուածքներով զարդա-
րած . բոլոր ծախքը 250 հազար Ֆրան-
քէն աւելի եղաւ : Տունը խաչաձև է .
մէջը տասուերկու մեծ սիւներու վրայ
կեցած գմբէթ մը կայ . չորս կողմը
եօթը մատուռ ունի . հեռուն ուրիշ
մատուռներ ալ կան՝ երեւելի նկարիչ-
ներու պատկերներով զարդարած ,
ճակատն ալ մարմարիոնէ գեղեցիկ
արձաններով : Հրապարակին մէջ մէկ
յորդ աղբիւր մը կայ շատ մեծագործ .
երեւելի է նաև աւանդատունը ու մեծ
սրահը , ուր որ կը պահուին գանձերն
ու ընծաները :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւթէն Սիւս Գաղղիացւոյն (Թագաւորան
Հրեայ անուանով գիրքը :

ՎԱՂՂԻԱԿԱՆ մատենագրութիւնը
ուրիշ ամէն ծաղկեալ ազգաց մատե-
նագրութեանը համեմատելով՝ գրե-
թէ միշտ ամէն ազգաց մէջ դիւրաւ
ընդունելի եղած է : Բայց , թէ որ
քանի մը շատ երեւելի մատենագիր-
ներ դուրս հանենք , շատ անգամ աս
ազգին մատենագրաց մեծ մասին մէջ
կը պակսի խորին փիլիսոփայական մը-
տածութիւն , ու բացատրութեան
ոյժ : Եւ սակայն որովհետև բնական
շնորհք մը , համոզողական վայելչու-
թիւն մը ու լեզուի անուշութիւն մը
ունին , անոր համար ամէն տեսակ
ընթերցողաց սիրելի կ'ըլլան : Սա-
նաւանդ աւելի ընդունելի կ'ըլլան չա-
փաւոր գիտնականաց , որ ամէն ազգի
մէջ խորունկ մտածողներու հետ բաղ-
դատելով՝ շատ աւելի են : (Յաւանքն
աս է՝ որ ամէն գրուածք , ինչպէս ա-
մէն ազգի մէջ՝ այսպէս Վաղղիացւոց
մէջ ալ , միշտ օգտակար չեն . երբեմն
ծուռ մտքէ , երբեմն ալ ապականեալ
սրտէ առաջ գալով՝ շատ վնասներու
պատճառ կ'ըլլան : Աւ այսպիսի վնա-